ԵՎՐՈՊԱՅԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ 2010 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ԵԸԻԸ ռազմավարության ժամկետը սպառվում է 2010թ.: Նոր ռազմավարության մշակման համար անդամ-պետություններին համագործակցության կոչ ենք անում: Ընկերակցության կանոնադրությամբ ամրագրված հավասարության սկզբունքի հիման վրա յուրաքանչյուր անդամ-պետություն կարող է ներկայացնել մտքեր, տեսակետներ ռազմավարության կատարելագործման համար: Սույն աշխատանքները կազմակերպելու համար անհրաժեշտ է ստեղծել *Ռազմավարության պլանավորման կոմիտե* (ՌՊԿ), որի անդամներն են լինելու Գործադիր կոմիտեի անդամները, ինչպես նաև Գլխավոր քարտուղարը: ԱՅ ԷՖ Ի ԷՍ - ը օժանդակելու է կոմիտեի գործունեությանը:

Վերոնշյալ կոմիտեի գործունեության ծրագիրը հետևյալն է՝

- ✓ 2009թ. սեպտեմբերի 5 - ԵԸԻԸ ռազմավարության կատարելագործում, Ռազմավարության պլանավորման կոմիտեի կազմավորում.
- ✓ 2010թ. մարտ/ապրիլ (Գործադիր կոմիտեի նիստ) - փաստաթղթի ստեղծում, որում անդամ-պետությունները կարտահայտեն իրենց տեսակետները.
- ✓ 2010 սեպտեմբեր - անդամ-պետությունների կողմից տեսակետների ներկայացման վերջնաժամկետ.
- ✓ 2010 դեկտեմբեր - Ռազմավարության պլանավորման կոմիտեն ԵԸԻԸ-ին կներկայացնի ռազմավարության պլանավորման նախագիծը.
- ✓ 2011 մարտ/ապրիլ - Գործադիր կոմիտեն կքննարկի նախագիծը.
- ✓ 2011 սեպտեմբեր - Գլխավոր վեհաժողովը կհաստատի նախագիծը:

ՌՊԿ-ն պատասխանատու է հետագայում ամենամյա համաժողովների անցկացման հայտերում մանրամասն ներկայացված նախագծի, ֆինանսավորման աղբյուրներով բյուջեի, վիզային ռեժիմի հետ կապված

տեղեկատվության, մասնակիցների անվտանգ ճանապարհորդության և անվտանգության պլանի ներառման համար:

ՌՊԿ-ն պատասխանատվություն է կրում 20-րդ ամենամյա տոնական համաժողովի նախապատրաստական աշխատանքների համար: